ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №48-Լ

«07» 06 2023 թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կոտայքի մարզի դատախազ Պետրոս Դանիելի Պետրոյանին ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին փոխադրելու և Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ Սևակ Արթուրի Պողոսյանին Կոտայքի մարզի դատախազի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի հունիսի 5-ի՝ համապատասխանաբար N 216-Ա և N 218-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Կոտայքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Պ.Պետրոյանի կողմից՝ Կոտայքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ս.Պողոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Պողոսյան Արթուր - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

*Հանձնախմբի անդամներ՝*

| | |
|---|---|
| Սուքիասյան Կարեն - | Կոտայքի մարզի դատախազի տեղակալ, |
| Մարտիրոսյան Հայկ - | ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ, |
| Նազարեթյան Արմինե - | ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ, |
| Ղահրամանյան Մարուշ - | ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, |
| Մանուկյան Լիաննա - | ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ, |
| Սարգսյան Նելլի - | Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի հունիսի 26-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ